ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____
« ___» _____ 2024 թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող Գ. Բալասանյանին

Ձեր 23.09.2024թ. գրությանը.

Հարգելի պարոն Բալասանյան

Ձեզ եմ տրամադրում տեղեկատվություն՝ ըստ առաջադրված հարցերի հերթականության.

1. ՀՀ Լոռու մարզում գործում են մարզային ենթակայության 29 կազմակերպություններ /5 բժշկական կենտրոն, 4 պոլիկլինիկա, 1 դիսպանսեր, 19 առողջության առաջնային պահպանման կենտրոններ/:

2. Վիրահատությունից, դիահերձումից առաջացած թափոնների ոչնչացումը կատարվում է՝

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում վիրաբուժական և ախտաբանաանատոմիական թափոնները տեղում չեն ոչնչացվում:

«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում կառուցված է ջրաթափանց հոր, որի մեջ լցվում են մանկաբարձագինեկոլոգիական և վիրաբուժական թափոնները, որից հետո դրանք ծածկվում են ախտահանիչ նյութի շերտով: «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում դիահերձում չի կատարվում:

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում առկա է բեկարյան հոր, որտեղ թափվում են ախտաբանաանատոմիական թափոնները, ապա ախտահանվում և ոչնչացվում են:

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ վիրաբուժական և ախտաբանաանատոմիական թափոնները տեղում չեն ոչնչացվում:

կատ.Ռ. Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99

«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում դիահերձում չի կատարվում, վիրաբուժական թափոնները տեղում չեն ոչնչացվում:

3. Բժշկական կենտրոններում առաջացած թափոնները դուրս են բերվում և ոչնչացվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Պայմանագրային գները տարբեր թափոնների համար տարբեր են, իսկ պայմանագրերի ժամկետը՝ անորոշ:

4. Մարզի տարածքում բժշկական թափոնները թափելու և ոչնչացնելու համար նախատեսված վայր չկա:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-09-30 16:25:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

կատ.Ռ. Պողոսյան
հեռ. /0322/ 2-33-99